ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 07.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/32

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով Անդրանիկ Վլադիմիրի Աբգարյանի կողմից 27.02.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/32 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>Անդրանիկ Աբգարյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Անդրանիկ Վլադիմիրի Աբգարյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 27.02.2018թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար թիրախների ձեռքբերման նպատակով սույն թվականի փետրվարի 7-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 15.02.2018թ.:

Հայտեր են ներկայացրել «Ալելի» ՍՊԸ-ն և «Տրանզիտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ալելի» ՍՊԸ-ն: Իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ալելի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պահանջներին համապատասխան, վերջինս ճանաչվել է որպես ընտրված մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Բողոքաբերը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր «Ալելի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ որպես հայտի ապահովում ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը ստորագրված է էլեկտրոնային եղանակով մասնակցի կողմից, իսկ վճարման պահանջագիրը՝ ոչ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-ի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Բողոքաբերը գտնում է, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Բողոքաբերը վկայակոչել է նաև Կարգի 41-րդ կետը:

Անդրանիկ Վլադիմիրի Աբգարյանը բողոքով Խորհրդին խնդրել է չեղյալ համարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թիրախների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշումները և ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2018թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1, 1.2 և 1.3 կետերով՝ «Ալելի» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու որոշումները և պայմանագիր կնքելու գործընթացը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Տրանզիտ» ՍՊԸ-ին:

Բողոքաբերը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.03.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Ալելի» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Ալելի» ՍՊԸ-ն 02.03.2018թ. միջնորդություն է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝ խնդրելով վերջինիս ներգրավել որպես երրորդ կողմ:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 02.03.2018թ. միջանկյալ որոշմամբ «Ալելի» ՍՊԸ-ի միջնորդությունը բավարարվել է:

Խորհրդին ուղղված 05.03.2018թ. գրությամբ «Ալելի» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

Ընթացակարգի հրավերով հայտի ապահովումը նախատեսված է 10-րդ հավելվածով: Հրավերի վերոհիշյալ հավելվածով մասնակցից պահանջվում է ներկայացնել տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

Սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ալելի» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, ներկայացրել է հավելված 10-ը (հայտի ապահովումը)՝ տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ մեկ էլեկտրոնային ֆայլով, և Ընկերության էլեկտրոնային թվային ստորագրությունը առկա է և տեսանելի Հավելված 10-ի առաջին էջի՝ տուժանքի մասին համաձայնագրի ներքևի ձախ անկյունում:

«Ալելի» ՍՊԸ-ն գտնում է, որ իր կողմից ներկայացված Հավելված 10-ը՝ այդ թվում նաև վճարման պահանջագիրը գնահատելով հրավերի պահանջներին համապատասխանող՝ մրցութի գհատաղո հանձնաժողովը գործել է իրավաչափ և չի խախտել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Ընկերությունը հայտնել է, որ հարցի կապակցությամբ իր հստակ դիրքորոշումն ունի գնումների դաշտում լիազոր մարմին հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարությունը: Այսպես, Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնը «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/1», «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/2» և «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրերով մրցույթների շրջանակներում 21.12.2017թ. թիվ 324 գրությամբ (կցվում է) հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է պարզաբանել հետևյալը. «Մրցույթի մասնակից «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ի Հավելված 10-ը (հայտի ապահովում) և վճարման պահանջագիրը կազմված է մեկ ֆայլով և դրված է էլեկտրոնային ստորագրություն միայն հավելված 10 ներքևի ձախ անկյունում: Վճարման պահանջագրում չկա ոչ կնիք, ոչ ստորագրություն: Խնդրում եմ գրավոր պարզաբանեք՝ հայտը պետք է մերժվի, թե ոչ»:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կ. Թամազյանը հայտնել է հետևյալը (գրության պատճենը կցվում է). «ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից որևէ մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման»:

Պետք է նշել, որ նույն խնդրի վերաբերյալ նույն մոտեցումն է ցուցաբերել նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ իր բազմաթիվ որոշումներով: Այսպես, ԳԲԽ-ԱՄ-

2017/25 և ԳԲԽ-ԱՄ-2018/23 բողոքների քննության արդյունքում կայացրած որոշումներով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը արձանագրել է, որ եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից որևէ մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրություն, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման»:

Ընկերությունը գտնում է, որ նման պայմաններում, երբ «Ալելի» ՍՊԸ-ի տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ներկայացվել են մեկ ֆայլով և տուժանքի մասին համաձայնագրի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա ընկերության հայտը ենթակա չէ մերժման, ուստի և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ալելի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելով հրավերի պահանջներին բավարարող՝ գործել է իրավաչափ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նման փաստական հանգամանքների պայմաններում ընկերությունը գտնում է, որ Անդրանիկ Վլադիմիրի Աբգարյանի կողմից 27.02.2018թ. ներկայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/32 բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանզի «Ալելի» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած վճարման պահանջագիրը համապատասխանում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերով սահմանված պահանջներին և այս պարագայում «Ալելի» ՍՊԸ-ի հայտը ենթակա չէ մերժման:

Միևնույն ժամանակ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Վիճարկվող Ընթացակարգի հայտ են ներկայացրել երկու մասնակից՝ «Ալելի» ՍՊԸ-ն առաջարկել է 2 198 200 ՀՀ դրամ, իսկ «ՏՐԱՆԶԻՏ» ՍՊԸ-ն՝ 5 368 500 ՀՀ դրամ (այսինքն երկու անգամ ավելի թանկ գին, տարբերությունը կազմում է 3 170 300 ՀՀ դրամ):

Ընկերությունը Խորհրդին խնդրել է մերժել Անդրանիկ Վլադիմիրի Աբգարյանի կողմից 27.02.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/32 բողոքը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին ուղղված 01.03.2018թ. թիվ ԴՎԱ/740 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 07.02.2018թ. հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/1» ծածկագրով թիրախների ձեռքբերման ընթացակարգ: Հայտերի բացումը տեղի է ունեցել Ընթացակարգի հրավերով սահմանված օրը և ժամին: Ընթացակարգին հայտ են ներկայացրել «Ալելի» ՍՊԸ-ն (ՀՀ ռեզիդենտ) և «Տրանզիտ» ՍՊԸ-ն (ՌԴ ռեզիդենտ): Մասնակիցների գնային առաջարկներն են՝

Հ/Հ	Ապրանքի անվանում	Պատասխանատու ստորաբաժանման կողմից սահմանված նախահաշվային գին (միավորի գների հանրագումար) ՀՀ դրամ	«Տրանզիտ» ՍՊԸ-ի գնային առաջարկ		«Ալելի» ՍՊԸ-ի գնային առաջարկ		1-ին տեղ զբաղեցրած մասնակից
			Գինը Առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	Գինը ԱԱՀ-ով (ՀՀ դրամ)	Գինը Առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	Գինը ԱԱՀ-ով (ՀՀ դրամ)	«Ալելի» ՍՊԸ
1	Թիրախներ վարժական հրաձգության համար (թիրախներ)	2 249 600	5 368 500	5 368 500	2 198 200	2 198 200	

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ալելի» ՍՊԸ-ն, իսկ 23.02.2018թ. նիստի 4 արձանագրության համաձայն, քանի որ «Ալելի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, ուստի «Ալելի» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

ՀՀ պաշտպանության նախարարությունը համաձայն չէ Բողոքաբերի պնդմանը, որ գնահատող հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր «Ալելի» ՍՊԸ-ի հայտը: «Ալելի» ՍՊԸ-ն տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ներկայացրել է մեկ համակցված PDF ֆայլով, որը հաստատվել է էլեկտրոնային ստորագրությամբ:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի՝ «Տրանզիտ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պահանջին, ապա նույնիսկ այն դեպքում, եթե «Ալելի» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվի, ապա «Տրանզիտ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու համար անհրաժեշտություն կառաջանա վերջինիս հետ բանակցել, քանի որ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է թիրախների ձեռքբերման համար նախատեսված նախահաշվային գինը: Համադրելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ Բողոքաբերի պահանջը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը:

Բողոքաբեր Անդրանիկ Աբգարյանը ըստ ներկայացված փաստաթղթերի չի հանդիսանում «Տրանզիտ» ՍՊԸ-ի ոչ հիմնադիրը և ոչ տնօրենը, հետևաբար Բողոքաբերի ոչ մի շահ չի ոտնահարվել, քանի որ վերջինս չի հանդիսանում սույն Ընթացակարգի մասնակից: Ուշագրավ է նաև այն, որ բողոքում առկա փաստաթղթերից Անդրանիկ Աբգարյանի անձնագրի վավերականության ժամկետը լրացել է 22.05.2017թ., որը ճշտման կարիք ունի, ավելին անձնագրում առկա ստորագրությունը ակնադիտարկման արդյունքում տարբերվում է բողոքով ներկայացված ստորագրությունից, ինչը նույնպես ճշտման և պարզաբանման կարիք ունի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ Անդրանիկ Աբգարյանի բողոքը հիմնավորված չէ, չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից և ենթակա չէ բավարարման:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.03.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲԽ-ԱՄ-2018/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թիրախների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Ալելի» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. «Ալելի» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 10 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում մեկ ֆայլի տեսքով, որի մեջ զետեղված է եղել տուժանքի մասին համաձայնագիրը և հայտի ապահովման վճարման պահանջագիրը:

3. Ընկերության կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել է միայն հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագիրը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ «Ալելի» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.02.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով կայացված որոշմամբ «Ալելի» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ալելի» ՍՊԸ-ի 27.02.2018թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2018թ. թիվ ԴՎԱ/740 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և

(կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թիրախների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգը կազմակերպվել է էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով և նախատեսվել է, որ մասնակիցները հայտը ներկայացնում են էլեկտրոնային եղանակով:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.19 ենթակետով սահմանվել է, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող

մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Ալելի» ՍՊԸ-ն, որը հայտի թիվ 10 հավելվածը՝ հայտի ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը) ներկայացրել է PDF մեկ ֆայլի տեսքով և էլեկտրոնային ստորագրությունը դրվել է միայն տուժանքի մասին համաձայնագրի վրա:

Ընկերության կողմից հայտի ապահովման տուժանքի մասին վճարման պահանջագրի վրա ստորագրություն չի դրվել:

Այսպես, Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Էլեկտրոնային փաստաթուղթը՝ տեղեկություն է գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Խորհուրդը գտնում է, որ գնման գործընթացը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու դեպքում, եթե մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացվել են մեկ ֆայլով և դրանց էջերից մեկի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա մասնակցի հայտը նշված հիմքով ենթակա չէ մերժման:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմին, թե պատվիրատուներին և թե մասնակիցներին ուղղված մի շարք պարզաբանումներում նույնպես արտահայտել է վերը նշված դիրքորոշումը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Ալելի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման միայն տուժանքի մասին համաձայնագրի

ստորագրված լինելը չի կարող դիտարկվել որպես վերջինիս հայտը հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու հիմք, քանի որ Ընկերության կողմից հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը ներկայացվել են էլեկտրոնային մեկ ֆայլով, որը հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդը գտնում է, որ բավարար գնահատելով «Ալելի» ՍՊԸ-ի հայտը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, ուստի Խորհուրդը գտնում է, որ Անդրանիկ Աբգարյանի կողմից Խորհրդին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Անդրանիկ Վլադիմիրի Աբգարյանի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 27.02.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**